



Մ ՈՒՐՐ Զ ԱԿՈՐ ՄՌԱԶՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Մ ԿԵՂԵՅԻ

ԱՐՏԱՔԱՄԱՆ ԿԻՐԱԿԻ

18 ՓԵՏՐՈՒՄ 2024

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցումներ	Էջ 4

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (33.2-22)

Ողորմէ՛ մեզի, Տէր, որովհետեւ քեզի՛ յուսացինք. անհաւատներու սերունդը կորուստի պիտի մատնուի, բայց դուն պիտի փրկես մեզ նեղութեան ժամանակ: Ժողովուրդները քու ահեղ ձայնէդ շմեցան, հեթանոսները փախան քու վախէդ: Ինչպէս խառնիճն ու մարխը կանաչութիւնը կ'ոչնչացնեն, այնպէս

յ ա փ շ տ ա կ ի չ ն եր ը
պիտի թափին անոնց աւարին վրայ, եւ անոնք ծաղր ու ծանակ պիտի ըլլան: Սուրբ է մեր Տէր Աստուածը որ բարձունքներուն մէջ կը բնակի. իրաւունքով եւ արդարութեամբ պիտի լեցնէ Սիոնը:

... իմաստութիւնը, գիտութիւնը եւ աստուածապաշտութիւնը պիտի ըլլան այն գանձերը, որոնցմով պիտի արդարանանք:

Այն ատեն հեթանոսները Օրէնքին ձեռքը պիտի մատնուին, իսկ մենք մեր գանձերով պիտի փրկուինք. իմաստութիւնը, գիտութիւնը եւ աստուածապաշտութիւնը պիտի ըլլան այն գանձերը, որոնցմով պիտի արդարանանք: Այն ատեն ձեր կրած երկիւղները իրե՛նք պիտի կրեն. անոնք՝ որոնցմէ դուք կը վախնայիք, իրե՛նք պիտի վախնան ձեզմէ. պատգամաւորներ պիտի ղրկեն ձեզի՛ խաղաղութիւն ու զելով, դառնապէս պիտի լան եւ խաղաղութիւն խնդրեն, որովհետեւ անոնց ճամբաները իրենց աւարտին հասան: Ալ պիտի չվախնաք հեթանոսներէն. անոնց հետ ձեր դաշինքը վերջ պիտի գտնէ եւ ա՛լ գանոնք մարդու տեղ պիտի չդնէք: Աշխարհը կը սգայ, որովհետեւ անչքացաւ. Լիբանանը մերկացաւ, Սարոնի դաշտագետինը տօթէն

այրեցաւ, Գալիլիա եւ Կարմեղոս լերկ մնացին: «Հիմա պիտի ելլեմ, - կ'ըսէ Տէրը, - եւ պիտի ցոյց տամ իմ փառքս ու զօրութիւնս, եւ դուք պիտի տեսնէք ու հասկնաք թէ զուր էր ձեր չափազանց ինքնավստահութիւնը եւ կրակը պիտի բնաջնջէ ձեզ: Այո, հեթանոսները պիտի այրին այնպէս՝ ինչպէս դաշտին փուշը կը կտրեն ու կրակը կը նետեն: Հեթանոսները պիտի լսեն ինչ որ ըրի, իմ ժողովուրդս պիտի ճանչնայ իմ զօրութիւնս»: Անօրէնները Սիոնէն դուրս դուրսեցան եւ արդէն դողը բռներ է ամբարիշտները. իսկ ո՞վ ձեզի պիտի պատմէ յաւիտենական կրակին մասին: Եթէ արդարութեամբ ապրիք եւ ուղիղը խօսիք, անօրէնութիւնն ու անիրաւութիւնը ատէք, ձեր ձեռքերը կաշառքէ հեռու պահէք, ոճրային առաջարկներ չլսելու համար ձեր ականջները խցէք եւ անիրաւութիւն չտեսնելու համար ձեր աչքերը փակէք, բարձր եւ հաստատուն ժայռի վրայ շինած կ'ըլլաք ձեր տունը. եւ այն ատեն ո՛չ հացի պակաս պիտի ունենաք եւ ոչ ջուրի. պիտի տեսնէք թագաւորը իր փառքով, ձեր աչքերը պիտի տեսնեն անոր անսահման երկիրը, եւ դուք պիտի խոկաք Տիրոջ երկիւղին մասին: Այն ատեն, ալ ո՛չ մարդահամար կատարողներ պիտի գան, ո՛չ հարկահաւաքներ, եւ ոչ ալ ձեր ամբողջութիւնները լրտեսողներ: Ա՛լ պիտի չլսէք Ասորեստանի անբարտաւան առաջարկները, ոչ ալ անոր խուժողութիւնը լեզուն, զոր կարելի է հասկնալ: Ահաւասիկ Սիոնը, մեր փրկութեան քաղաքը. ձեր աչքերով տեսէք Երուսաղէմը, ճոխութեան քաղաքը, յաւիտենապէս անշարժ վրանի մը պէս, որուն ո՛չ ցիցերը կը խախտին, ոչ ալ պարանները կը փրթին: Այնտեղ ձեր մէջ ներկայ պիտի ըլլայ Տէրը իր փառքով, եւ երկիրը ձե՛րը պիտի ըլլայ իր լայնահուն գետերով ու ջրանցքներով. ա՛լ օտարութիւն պիտի չերթաք եւ ձեր նաւերը պատերազմի պիտի չելլեն, որովհետեւ մեր մեծ Աստուածը այլեւս պիտի չլքէ մեզ: Տէրն է մեր հայրը, Տէրն է մեր դատաւորը, Տէրն է մեր իշխանը, Տէրն է մեր թագաւորը, Տէրն է մեր փրկիչը, ի՛նքն է որ մեզ պիտի փրկէ:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ
(12.1-13.10)

Ուստի, եղբայրներ՛ր, քանի Աստուած այնքան որդուք ձեզ Աստուծոյ ընծայէք որպէս կենդանի զոհ մը՝ իրեն վերապահուած, որովհետեւ ատիկա է Աստուծոյ ուզած ճշմարիտ պաշտամունքը: Այս աշխարհի մարդոց վարմունքը մի՛ ընդօրինակէք, այլ նորոգուած միտքերով նոր մարդ եղէք, որպէսզի ձեր փորձառութեամբ ընտրէք լաւը, գիտնալով Աստուծոյ կամքը, այսինքն՝ ինչ որ բարի է, ընդունելի է իրեն եւ կատարեալ:

...Քրիստոսի միացած ըլլալով՝ մենք բոլորս մէկ մարմին ենք:

Ինծի տրուած Աստուծոյ շնորհքով հետեւեալ պատուէրը կուտամ իւրաքանչիւրիդ. - մեծ միտ եւ ինքնահաւան մի՛ ըլլաք. ընդհակառակը, միշտ համեստ եղէք եւ միայն Աստուծմէ մեզի տրուած հաւատքին չափով

գնահատեցէք դուք ձեզ: Ինչպէս մեր մարմինը բազմաթիւ անդամներ ունի, որոնց պաշտօնը նոյնը չէ սակայն, այնպէս ալ Քրիստոսի միացած ըլլալով՝ մենք բոլորս մէկ մարմին ենք: Թէպէտ որպէս անդամներ իրարու կապուած ենք, բայց Աստուծոյ շնորհքը իւրաքանչիւրիս տարբեր պարգեւ մը տուած է, զոր պէտք է գործածենք: Եթէ պատգամախօսութեան պարգեւը ունինք՝ պէտք է պատգամենք մեր հաւատքին համեմատ: Եթէ ծառայելու շնորհքը տրուած է՝ պէտք է ծառայենք: Եթէ ուսուցանելու ձիրքը ունինք՝ պէտք է ուսուցանենք: Եթէ յորդորելու կարողութիւնը ունինք՝ պէտք է յորդորենք: Իր ունեցածը ուրիշներուն բաժնողը առատօրէն թող բաշխէ: Վերակացու եղողը եռանդագին թող աշխատի: Ողորմութիւն ընողը խնդութեամբ թող ընէ:

Ձեր սէրը թող անկեղծ ըլլայ: Ատեցէք ինչ որ չար է եւ տեւաբար բարիին ձգտեցէք: Եղբօր պէս զիրար սիրեցէք գործովանքով: Յարգելու մէջ զիրար գերազանցեցէք: Եռանդագին աշխատեցէք առանց ծուլանալու: Զերմեռանդ հոգիով Տիրոջ ծառայեցէք: Յոյսով ուրախացէք, նեղութեանց մէջ համբերող եղէք, յարատեւ աղօթեցէք: Կարիքի մէջ եղող եղբայրներուն օգնեցէք եւ միշտ հիւրասէր եղէք:

Օրհնեցէք ձեզ հալածողները. մի՛ անիծէք, այլ օրհնեցէք: Ուրախացողներուն հետ ուրախացէք եւ լացողներուն հետ լացէք: Բոլորին հանդէպ

Բոլորին հանդէպ նոյն վերաբերումը ունեցէք. մեծամիտ մի՛ ըլլաք, խոնարհ մարդոց ալ ընկերութիւն ընելու զիջեցէք, եւ դուք ձեզ իմաստուն մի՛ համարէք:

Ունեցէք մէկուէն չարիքին չարիքով մի՛ հատուցանէք: Զանացէք ընել ա՛յն ինչ որ բոլոր մարդոց աչքին բարի է: Որքան կրնաք՝ ամենուն հետ խաղաղ ապրեցէք: Սիրելիներ՛ր, երբեք դուք անձամբ վրէժ լուծելու մասին մի՛ մտածէք, այլ ձգեցէք որ Աստուծոյ բարկութիւնը ընէ ատիկա. որովհետեւ Տէրը Սուրբ Գիրքին մէջ կ'ըսէ. «Ի՛մս է դատելու եւ պատժելու իրաւունքը. ե՛ս պիտի հատուցանեմ», իսկ ուրիշ տեղ մը կ'ըսէ. «Եթէ թշնամիդ քաղցած է, հաց տուր իրեն. եթէ ծարաւ է, ջուր տուր: Այսպէս վարուելովդ արդէն ամօթը զիմ կ'այրէ»: Մի՛ պարտուիր չարէն, այլ բարիով յաղթէ չարին:

Ամէն մարդ պետական իշխանութեանց պէտք է հնազանդի, որովհետեւ առանց Աստուծոյ թոյլտուութեան իշխանութիւն չի կրնար ըլլալ, եւ գոյութիւն ունեցող իշխանութիւնները Աստուծմէ կարգուած են: Ուստի, ով որ իշխանութեանց կը հակառակի՝ Աստուծոյ հրամանին է որ կը հակառակի, եւ հակառակողները իրենք զիրենք դատապարտութեան տակ կը դնեն: Իշխողները վախ չեն պատճառեր բարիք գործողներուն, այլ միայն չարագործներուն: Դուն կ'ըզե՞ս իշխանութենէն չվախնալ. բարիք գործէ, եւ անկէ գովասանք կը լսես. որովհետեւ Աստուծոյ պաշտօնեան է անիկա, քու բարիքիդ համար կարգուած: Իսկ եթէ չար գործես՝ վախցիր անկէ, որովհետեւ գուր տեղը չէ որ սուր կը կրէ. որպէս Աստուծոյ պաշտօնեայ բարկութեամբ կը դատէ եւ կը պատժէ չարագործները: Ահա թէ ինչո՞ւ պէտք է իշխանութեանց հնազանդիլ. ո՛չ միայն պատիժէն զերծ մնալու, այլ մանաւանդ խիղճով հանգիստ ըլլալու համար: Ատոր համար է նաեւ որ իշխանութեանց տուրք կը վճարէք, որպէսզի իբրեւ Աստուծոյ պաշտօնեաներ շարունակեն իրենց այդ դերը կատարել: Հետեւաբար անոնցմէ իւրաքանչիւրին հանդէպ ձեր պարտաւորութիւնը կատարեցէք, տուրքը տալով անոր՝ որուն տուրք պէտք է տաք, մաքսը տալով անոր՝ որուն մաքս պէտք է տաք, հնազանդելով անոր՝ որուն հնազանդութիւն կը պարտիք եւ յարգելով ան՝ որուն յարգանք կը պարտիք:

Ունեցէք մէկուէն չարիքին չարիքով մի՛ հատուցանէք: Զանացէք ընել ա՛յն ինչ որ բոլոր մարդոց աչքին բարի է: Որքան կրնաք՝ ամենուն հետ խաղաղ ապրեցէք: Սիրելիներ՛ր, երբեք դուք անձամբ վրէժ լուծելու մասին մի՛ մտածէք, այլ ձգեցէք որ Աստուծոյ բարկութիւնը ընէ ատիկա. որովհետեւ Տէրը Սուրբ Գիրքին մէջ կ'ըսէ. «Ի՛մս է դատելու եւ պատժելու իրաւունքը. ե՛ս պիտի հատուցանեմ», իսկ ուրիշ տեղ մը կ'ըսէ. «Եթէ թշնամիդ քաղցած է, հաց տուր իրեն. եթէ ծարաւ է, ջուր տուր: Այսպէս վարուելովդ արդէն ամօթը զիմ կ'այրէ»: Մի՛ պարտուիր չարէն, այլ բարիով յաղթէ չարին:

ունեցէք, քանի որ իր ընկերը սիրողը կատարած կ'ըլլայ Աստուծոյ Օրէնքը: Որովհետեւ Աստուծոյ պատուիրանները, «Մի՛ շնար, Մի՛ սպաններ, Մի՛ գողնար, Սուտ վկայութիւն մի՛ ընել, Մի՛ ցանկար» եւ միւս բոլորը խտացած են սա միակ պատուիրանին մէջ. «Սիրէ ընկերդ քու անձիդ պէս»: Ով որ իր ընկերը կը սիրէ, չարիք չ'ընէր անոր: Ուրեմն սիրել՝ կը նշանակէ Աստուծոյ Օրէնքը լման գործադրել:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
(5.17-48)**

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.-
«Մի՛ կարծէք թէ եկայ Մովսէսի Օրէնքը կամ մարգարէներու ուսուցումները ջնջելու, այլ ամբողջացնելու: Հաստատ գիտցէք, որ բոլոր Օրէնքն ու մարգարէութիւնները կէտ առ կէտ պիտի իրականանան առանց բառ մը իսկ դուրս ձգելու, մինչեւ գայ այն օրը, երբ երկինքն ու երկիրը պիտի անցնին: Ով որ ամենափոքր պատուիրանն իսկ զանց ընէ եւ ուրիշներուն ալ պատուիրէ նոյնը կատարել, երկինքի արքայութեանը մէջ յետինը պիտի նկատուի: Իսկ ով որ գործադրէ պատուիրանները եւ նոյնը ուսուցանէ, մեծ պիտի ըլլայ երկինքի արքայութեան մէջ: Կ'ըսեմ ձեզի, երկինքի արքայութենէն ներս կրնաք մտնել ա՛յն ատեն միայն, երբ Աստուծոյ պատուիրաններուն ձեր հաւատարմութիւնը փարիսեցիներուն եւ օրէնքի ուսուցիչներուն ունեցած հաւատարմութենէն աւելի ըլլայ:

«Լսեր էք որ անցեալին ըստած է. “Մի՛ սպաններ, որովհետեւ ան որ կը սպաննէ, պիտի դատապարտուի”: Իսկ ես կ'ըսեմ ձեզի. Ով որ առանց պատճառի իր եղբոր դէմ բարկանայ, պիտի դատապարտուի: Ով որ իր եղբայրը յիմար կոչէ, դարձեալ ատեան պիտի բերուի. կամ, ան որ իր եղբայրը անմիտ կոչէ, Գեհենի կրակին պիտի դատապարտուի: Եթէ գոհի սեղանին վրայ ընծադ Աստուծոյ մատուցանելու ատեն յիշես որ եղբայրդ վշտացած է քեզմէ, ձգէ՛ ընծադ սեղանին առջեւ, գնա՛ նախ հաշտուէ եղբորդ հետ եւ ապա եկուր եւ ընծադ Աստուծոյ մատուցանէ:

«Երբ մէկը խնդիր ունի քեզի հետ եւ դատի կը կանչէ քեզ, սկիզբէն համաձայնութեան եկուր անոր հետ, երբ տակաւին ժամանակ ունիս. այլապէս քեզ դատաւորին կը յանձնէ, դատաւորն ալ՝ ոստիկանին, եւ բանտ կը նետուիս: Վստահ

եղիր, թէ բանտէն պիտի չելլես մինչեւ որ տուգանքիդ վերջին դահեկանը չվճարես:

«Լսեր էք որ ըստած է. “Մի՛ շնար”: Իսկ ես կ'ըսեմ ձեզի, թէ ով որ ցանկութեամբ նայի ոեւէ կնոջ՝ արդէն իսկ իր սիրտին մէջ շնութիւն ըրած կ'ըլլայ անոր հետ: Եթէ աջ աչքդ քեզ կը գայթակ-դեցնէ, հանէ՛ եւ նետէ գայն, որովհետեւ նախընտրելի է որ անդամներէդ մէկը կորսնցնես քան ամբողջ մարմնով դժոխք նետուիս:

Եթէ աջ ձեռքդ քեզ կը գայթակդեցնէ, կտրէ՛ ու նետէ գայն, որովհետեւ, նախընտրելի է որ անդամներէդ մէկը կորսնցնես, քան ամբողջ մարմնով դժոխք նետուիս:

«Ըստած է նաեւ. “Ով որ իր կինը կ'արձակէ, անոր արձակման թուղթ թող տայ”: Իսկ ես կ'ըսեմ ձեզի. ան որ առանց պոռնկութեան պատճառի իր կինը կ'արձակէ, ինք պատճառ կը դառնայ անոր շնութիւն ընելուն: Նոյնպէս, շնութիւն ըրած կ'ըլլայ ան՝ որ կ'ամուսնանայ արձակուած կնոջ հետ:

«Լսեր էք նաեւ որ անցեալին ըստած է. “Յնագանց մի՛ ըլլար, այլ կատարէ ինչ որ երդուած էիր Աստուծոյ”: Իսկ ես կ'ըսեմ ձեզի. բնաւ երդում մի՛ ընէք, ո՛չ երկինքի վրայ, որովհետեւ Աստուծոյ դահն է, ո՛չ երկրի վրայ, որովհետեւ անոր ոտքի պատուանդանն է, ո՛չ Երուսաղէմի վրայ, որովհետեւ Մեծ Թագաւորին՝ Աստուծոյ քաղաքն է, եւ ո՛չ ալ քու գլուխիդ վրայ, որովհետեւ չես կրնար մազ մը իսկ ձերմկնցնել կամ սեւցնել: Պարզապէս ձեր այրն այր թող ըլլայ եւ ոչը՝ ոչ: Անկէ աւելին չարէն կու գայ:

«Լսեր էք որ ըստած է. “Աչքի դէմ աչք պիտի հատուցանես եւ ակոյալի դէմ՝ ակոյալ”: Իսկ ես կ'ըսեմ ձեզի. Մի՛ հակառակիր քեզի չարիք ընողին: Եթէ մէկը աջ երեսիդ ապտակ զարնէ՛ միւս երեսդ ալ դարձուր անոր: Եւ եթէ մէկը ուզէ քեզ դատի կանչել շապիկդ առնելու համար, բաճկոնդ ալ տուր անոր: Եթէ մէկը քեզ բռնադատէ մէկ մղոն միասին երթալ՝ իր բռնը շալկելու համար, անոր հետ երկու մղոն ալ գնա: Եթէ մէկը քեզմէ բան մը խնդրէ՛ տո՛ւր, եւ եթէ մէկը քեզմէ բան մը փոխ առնել ուզէ, երես մի՛

... ով որ ցանկութեամբ նայի ոեւէ կնոջ՝ արդէն իսկ իր սիրտին մէջ շնութիւն ըրած կ'ըլլայ անոր հետ:

... ձեր այրն այր թող ըլլայ եւ ոչը՝ ոչ:

դարձներ:

«Լսեր էք արդարեւ որ ըսուած է. ‘Միրէ՛ ընկերդ եւ ասէ քշմամիդ’»: Իսկ ես կ’ըսեմ ձեզի. Միրեցէ՛ք ձեր թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները, բարիք ըրէ՛ք ձեզ ատողներուն եւ աղօթեցէ՛ք անոնց համար, որոնք ձեզ կը չարչարեն ու կը հալածեն: Այդպիսով դուք ձեր երկնաւոր Հօր զաւակները կը դառնաք, որովհետեւ ան իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ՛ բարիներուն վրայ եւ անձրեւ կը տեղացնէ թէ՛ արդարներուն եւ թէ՛ մեղաւորներուն վրայ: Եթէ միայն սիրողները սիրէք, ի՞նչ տարբերութիւն կ’ունենաք մեղաւորներէն: Մեղաւորներն ալ նոյնը չե՞ն ըներ: Նմանապէս, եթէ միայն ձեր ծանօթները բարեկամ նկատէք, հեթանոսներէն եւ մեղաւորներէն աւելի ի՞նչ ըրած կ’ըլլաք: Անոնք ալ նոյնը չե՞ն ըներ: Արդ, դուք կատարեալ եղէք, ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է»:

Ս. ՅԱԿՈՒ ԱՌԱՋԱՌՈՒԿԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅՐ

ՄԵԾ ՊԱՀՔ 2024

ՀՍԿՈՒՄԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ
ԵՒ
ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Չորեքշաբթի, 21 Փետրուար
Երեկոյեան ժամը 7.00-8.00:

Խորհրդածոյի համար անցնելու
Գեր. Տ. Գեորգ Ծ. Վրդ. Չափարեան

ՆԻԹ՝
ԼԵՐԱՆ ՔԱՐՈՉԻ ԵՐԱՆԻՆԵՐՈ

ԱՐԵՒԱԳԱԼԻ
ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ
ԵՒ
ՀՈԳԵՒՈՐ
ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ
ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐԵՐՈ
Առաջօրեան ժամը 11.00:

Այժմե՛ք
ԵԿԵՂԵՅՈՅ
ԴԻՄԱՏԵՏՐԻ ԷՉՈ

ԵՒ
ՁԵՐ ՀԱՄԱՆՈՒԹԻՒՆԸ յԱՅՏԱԵՅԷՔ
(like).

www.facebook.com/SourpHagopChurchMontreal

Այժմե՛ք
Ս. ՅԱԿՈՒ ԱՌԱՋԱՌՈՒԿԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅՈՅ ԿԱՅԷՇՈ՝
www.sourphagop.net

ՀՈԳԵԼԱՆԳԱՏԵԱՆ
ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈ
ԱՆՈՐՈՐԸ ԿԱՏԱՐԵՅԷՔ ԿԱՊՈՒԿԵԼՈՎ
ԵԿԵՂԵՅՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ: